



Ա Բ Ա Ր Ա Ը

ԹԻՒ Դ. — ԵՐԱԾՈՒ Ժ. 2.

1883

ՏԱՐԻ Ժ. Զ. ԱՊՐԻԼ 30

ՄԱՐԴԻԱՆ ԻՒՅ ԵԿ ՈՒՐԵՇՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ  
ԱՐԺԱՆԱՍԻԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Աշխարհի իմաստությունը այք խարող մի երկութ է, եթէ որ Քրիստոս չէ այդ իմաստության գլուխ, այդպատճ իմաստությունը մարզիս հավաքածության կտանիք և յանցանիք ճանապարհն դէպ ի մեր անկուժուն: Միայն նրենային իմաստությունը մաքուր է ու անարատ, խաղաղության սիրող, քաղցր, ներողամբա, կուսակցութիւններից հեռու, մեր սիրտը սուրբ դաստիարակութիւնով է կրթում ու նորա՞ մեզ համար թե-

րած պառուզը՝ յափառնական կեանքն է: Սորա համար ամենայն ջանք արած—որովհեահւ առանց ջանքի ցինիք, — միայն այդ անանցանների լուսնի արժանանալու, ու ոյս աշխարհումն որ բոլորովին համարի մկարողանաս, յօյս ունեցիր, որ մի որ այդ յշան կծաղի թեզ իւր երենային պայծառութիւններին:

Ին ժամանակի իմաստունի մինն ասել է թէ՝  
գժուար հանելուկը մարդիս համար՝  
Հայութ թնդան է: Եւ ճշմարիտ է այդ խօսքը շատ ու շատ կողմանէ: Մարդս է, որի բերանը եւ տաք է փը-  
ցում: Եւ սառն, ժամ ժամի վրայ, կարծես, բոլորովին փոխվում  
է: որ իւր հրեշտակ դառնալու ընդունակութիւններովն՝ լիքն  
աշխարհիս վրայ իւր համար գժուիք է ստեղծում: որ թէ եւ տկար

արարած է ու երկրի վրայ սովացող մի որդի նման, բայց իւր բանական հոգւովն ըոլոր աշխարհս թռչումէ, անց կենում եւ իւր հօգւոյ մեծութիւնովը շատ գժուար վիճակների մէջ յաղթող լինում:

Մարդին՝ օտարութի մի արարած լինելու կողմանէ՝ կարժի այն եւս ասել շատերի համար՝ իրրեւ մի զարմանալի ու չհաւատալու բան՝ որ նա շատ անգամ իւր վիճակից գոհ չէ. բայց ուրիշների տռաջն այնպէս է ցոյց տալիս, որ շատ լաւ գրութեան մէջ է, մինչեւ անգամ պարծենումէ թէ ես այսպէս եմ ու այնպէս եմ, երանի թէ շատ մարդ ինձ նման ու իմ գրութեան մէջը լինէր — ու մի քիչ ժամանակից յետոյ, որ իւր գրութիւնն ողորդ այնչափ լաւանումէ, որ ուրիշները կարող են ուրախանալ նորա վրայ, ինքն ընդհակառակն գժգոհ ել լինում. երբ որ ուրիշներն ասումեն թէ՝ այժմ լաւ ես, գորանից լաւ էլ ի՞նչ կուզես:

Այս երկու գէպքումն եւս մարգս իւր տկարամնութիւնն է ցոյց տալիս: Թէեւ սրտի այն գոհութիւնն, որ մեզ ունենումենք մեր կատարելութիւնները տեսնելով ու հասկանալով. այն ուրախութիւնը, որ մեզ բերումէ մեր բռնած գործերի յաջողութիւնն, այն ախորժ զգացմունքն, որ մեր սիրոը զուարձացնումէ մեր տնական ու հասարակական կեանքի մէջ մեզ ուրախութիւն բերող հանգամանքներից — թէեւ այս ամենն, ինչ որ յիշեցի, բնական է, որ մարգիս սրտին գիւր պիտի գայ, որովհետեւ մեր երկրաւոր կեանքի բազգաւորութեան մի մասն է, ու գրեթէ միշտ մեր ջանքերի ու աշխատութիւնների նպատակն: Բայց մեր սրտի այս ուրախ գրութիւնն, որ մեր ունեցած բարեմասնութիւններիցն, արժանաւորութիւններիցն է, շատ քիչ բան է, — գորանով չենք կարող բաւականանալ՝ ու թէեւ մեզ բազգաւորութիւն բերող անակնունելի պատահմունքներից եւս երբեմն ուրախանանք, բայց եւ այնպէս այդ ուրախութիւնն երբէք մեզ համար տեւողական նշանակութիւն չէ կարող ունենալ: Գոհ սրտի անպղտոր զգացմունքն պարզ երեւումէ այն ժամանակ, երբ որ մեր մինակ եղած միջոցին եւս գոհ ենք լինում, եւ ուրիշների հետ քաղցր ու կակուղ կերպով ենք վարվում: նորա բազգտաւորութեանն անտարբեր չենք մնում եւ ուրախակցումենք, եւ որ տեղ որ պէտք է, միփիթարումենք ուրիշներին, սիրտերը հանգստացնում: միամտացնում ու հառնում նրանց վատ

օրերին; Միայն նա խսկապէս խըր սրտի մէջն ուրախութիւն ունի, ով որ սրտանց ցանկանումէ, որ ուրիշներին եւս ուրախ տեսնի, կամ ուրախացնի:

Առանց շատ սիսալուերու կարելի է հաւատալ որ՝ նայ ով որ իւր ունեցած արժանաւորութիւններովը, պատուավը, լաւ գիրքովն՝ ուրիշների առաջին պարծենալ է սիրաւմ՝ իւր բաղդաւորութիւններովն, որ ունի, այդպիսի մարդն ամենեւին գոհ չէ իւր վիճակիցն, այլ ընդհակառակն անբազդ ու դժգոհ է իւր սրտումն, թէեւ բաղդն իրան յաջողել է: Ով որ կամաւ այնպէս է իրան ցոյց տալիս, որ ամեն բանով լի է, էլ պակաս բան չկայ իւր համար. ով որ ինքն իւր վրայ շատ է խօսում թէ՝ այս ունի՝ այն ունի, իմացիր որ գեռ եւս շատ բանի կարօտ է: Նատ անգամ իւր սրտի նեղութիւնիցն է, որ այդպիսի բաներ է խօսում ինքն իրան մխիթարելու համար ու ինքն իրան խաբումէ՝ իբրեւ մի երեխայի. իւր մեծասիրո լինելուցն է, որ ուրիշներից յետ մնալ, պակաս լինիլ չէր ուզիլ. իւր ամբարտաւանութիւնիցն, ունայն պարծանքի ու փառքի ետեւից խելքը տանել տալուցն է, որ կուզենար իւր սիրան այնպէս գոհ եւ ուրախ լինի, որ ուրիշներն իրան նախանձէին:

Միւս կողմիցն յայտնի երեւումէ մի թուլութիւն որ՝ մարդու կարող էր ոգորդ գոհ լինել իւր վիճակից, բայց չէ կարողանում ուրախ սիրա ունենալ, երբ որ տեսնումէ, որ ուրիշներն իրանից աւելի առաջ են, աւելի լաւ են: Այս դժգոհութիւնը սրտի, չէ կարելի ասել, որ ամեն ժամանակ էլ անկուշտութիւնիցն է, ինչքան ու ունեւոր լինի, այլ շատ անգամ մարդս նախանձումէ ուրիշներին նաեւ այն բաների համար, ինչ որ ինքն ունենալու ցանկութիւն եւս չունի. պատահումէ որ՝ մարդս ուրիշն բարի չէ ցանկանում; չկամ է, զորա համար չէ ուզում, սիրուը չէ վեր առնում, որ նա լաւ լինի, բաղդաւորութիւն ունենայ, որ ուրիշների առաջին անուն, պատիւ ունենայ: Նատ ու շատ անգամ պատճառն այն է, որ իւր նման մարդին իւր մէջը մարդու տեղ չէ գնում: կամ իւր սրտի մէջը նորան չարակամ է, թշնամի է, շատ անգամ եւս սիրան այնպէս է ուզում իւր մեծամիտ ու անպիտան մարդ լինելուցը, ունայնասիրութիւնիցն, որ ուրիշի աչքումն լոյս չլինի: Առանց պատճառի չեմ ասում: ինչի որ դուք լաւ գիտէք թէ՝ ո՞քան մարդիկ կան, որ ուրիշի այն բանն ու-

նենալը չեն ուզում՝ ինչ որ իրանք ունի՞ն։ Նրանք կցանկանային, որ միայն իրանք ունենան, որ դորանով իրանք աւելի պատռաւոր երեւին։ Ենց որ իրանց աչքումն այնպիսի մի ջոկ բան չէ, որ միայն իրանք ունենային, նրանց համար մի ջոկ նշանակութիւն եւս չունի, ինչի որ իրանց աւելի չէ բարձրացնում, ուրիշներից աւելի չէ ցոյզ տալիս։ Ամենալաւ բանն անգամ նորանց աչքումն իւր արժէքը կորցնումէ, երբ որ ուրիշներն եւս ունին, ինչպէս ինքն ունի։

Քիչ չեն այն տեսակ մարդիկն եւս որ խրեանց ունեցած բոլոր բազգաւոր հանգամանքներն իրանց ունայնասիրութեանը կոչող մի խաղի վրայ այլ եւս աչքներին չէ գալիս, մառանամեն։ որ կօյր են իրանց ունեցած խկական արժանաւորութիւններն ու ունեցած բարիքները տեսնելու, ինչ է որ սիրոներն այնպէս է ուզում, իրանց կամքին մի բան ընդգէմ է։ որ ամեն բան ունին ու խելօք որ շարժէին, իրանց կեանքը բաղդառ անց կրկացնէին, բայց ուրիշներին նախանձելին իրանց հանգստաւոթիւն չէ տալիս, ուրախութիւնից ու գոչ կեանք ունենալուց զրկումէ, սիրոները չէ վեր տռնում, որ ուրիշը լաւ լինի իրանց համար պատիժ է, սիրոները որդիկ պէս կրծումէ։

Եթէ չկամութիւնը անխելքութիւնիցն է միայն, նախանձը՝ փշացած սրտիցն է միշտ։ Նախանձը՝ այնպիսի գլխաւոր մորթիւն է, որ շատ ու շատ ախտեր, բարյական պակասութիւններ մի եւնոյն մարդի մէջ լինելուցն է յառաջ գալիս։ այդպիսի մարդի մէջ կայ թէ զզուելի եւ անկուշտ ընչասիրութիւնը, թէ գարշելի անբարտաւանութիւնը եւ թէ մարդոց միայն չար կամենալն ու մեքենայներ բանեցնելով՝ չարի հանգիստեցնելն ու վայր ձգելը։ Այս զզուելի ախտը, այս գարշելի պակասութիւնն ոչ միայն նախանձ ունեցողին հանգիստ կեանք, ուրախ սիրո ունենալ չէ թողնում։ բայրութիւնն սեւացնելով իւր օրերն այլ եւ արիւնը փշացնումէ սիրոն՝ այբուելով։ ինքն իրան ուտելով թէ ինչպէս անի, ինչ հնարներ բանեցնի, որ ուրիշի անունը, պատիւը կոտրի, լաւ օրերն սեւացնի, սեւ որտավ նստացնի։ ինչի որ ուրիշին բազգաւորութեան մէջ տեսնելը նորա համար մաչ է։ Այս զզուելի պակասութեան՝ հարազատ քոյրերն ու եղբայրներն որ միմեանց հետ սիրով ու միաբանութեամբ ապրումն շատ տեսակ ախտերն են, որ ամբարտաւան մարդի փշացած

սրտի մէջը բնակումեն՝ իրարից չբաժանուող, իրար սիրով քոյրերի ու եղբայրների նման, իսկ զաւակները՝ չարախնդացութիւնն է, զրպարտութիւնն, անարդարութիւնը, կեզծաւորութիւնն ու ատելութիւնը։ Նախանձն, որ ինչպէս ասացի, տեսնել, իմանու ու տանել չէ կարող ուրիշի յաջողութիւնն ու բազգաւորութիւնըն, այն գարշելի ջանքն է, որ ամեն կերպ աշխատումէ, կաշիցը գուրս է գալիս, ինչ է որ մի հնարք գտնի, նորան իւր բազգաւորութիւնից զրկի, խիմի իւր ձեռքը ձգի ու իրանը լինի, կամ միայն նորա համար է իրան չարչարում, որ նորա վրայ մի մուրքսի, եթէ որ նորա բազգաւորութիւնը ձեռքիցը խլել առնել չէ կարող։

Այս գարշելի պակասութիւնն անտառնական ու գաղանական բնաւորութիւն ունի։ Փոքրիկ կենդանին անգամ նախանձելով է մտիկ տալիս ուրիշի բերանի կտորին ու ջանք է անում։ Որ նորանից խլի, ինքն ուտի։ Այս է պատճառն, որ մենք զղփումենք, գարշումենք, երբ որ մի մարդի վրայ այդ տեսակ անպիտան սպակասութիւնն ենք տեսնում։ Խոկոյն հասկանումենք թէ ինչ վատ հոգւոյ տէր է, եւ թէ ինչպէս ինքն իւր գլխին եւս մեծ մեծ ցաւեր է բերում։ Այդպիսի մարդն յիրաւի շատ անբազգներից մինն է, որովհետեւ ունեցածովը բաւականանալ ու Աստուծոյ փառք տալ ամենեւին չգիտէ թէ ինչ բան է։

Թէեւ բարի մարդոց մէջն եւս, ուրիշների բազգաւորութիւնը տեսմելով, կարող են ցանկութիւններ ծնել, որ նորա ունեցածներն իրանք եւս ունենան։ Այդ տեսակ ցանկութիւնները բարի մարդոց համար առիթ ու խթան են գառնում գլուխը քարէ քար՝ պատէ՝ պատ տալու, որ բան տեսնեն, գործ կատարեն, իրանց սրտի ուղածին համելու համար, ոչ թէ ձեռքերը ծալեն, նստեն ու նախանձեն ուրիշի ունեցած բազգաւորութիւնն։ Այդպէս որ շարժեն, այդպէս որ անեն բարի սրտի տէր մարդիկն, այն ժամանակ պէտքէ ասենք, որ նորանց գործունէութիւնն ու գործը բարեկաշտ ու ազնիւ մարդոց բանած ճանապարհին ու իրանց պատուական հոգուն արժանի է։ Այդ սրտի տէր մարդն՝ իւր նման մարդին նեղացնելու, բռնած ճանապարհիցն՝ կամ ունեցած գիրքից գուրս ձգել չէ ուղում, այլ աշխատումէ, նորա ունեցած բազգաւոր վիճակին, որ հասել է, ինքն եւս հասնի, օրինաւոր ճանապարհով ամենեւին մկանելով, կամ վնաս ըրտա-

լով նորան։ Այստեղ նորա արած ջանքն ու աշխատութիւնը մի գովելի նախանձութան էնէն, մը բարի բանի մէջ։ Այդպիսի բարի նախանձը, կամ գովելի նախանձաւորութիւնը պատուական գործեր կատարելու գլխաւոր պատճառն է, ինչպէս մի մայր, որ զաւակներ է աշխարհք ծնում ու նորանց կեանքի պատճառը լինում։

Որբան եւս որ՝ ամեն մի մարդի համար՝ ստոր ու անարդ բան է առելի նախանձը, երբ որ մարդ ուրիշի խօսքերի, շարժմունքների եւ գործերի մէջ տեսնումէ, — այնքան եւս հեշտ է մտնում այս տիտը մարդիս սրտի մէջն, որ նորա բաղդաւոր կեանքը թունաքորի, սեւացնի, նրա սրտի մէջն ուրախութիւնը՝ հանգստութիւնը, ունեցածովը բաւականանալու քաղցրութիւնը դառնացնի։ Գրէթէ ամեն օր չե՞նք լսում գանգատներ այս այն՝ մարդից, ինչ է թէ՛ սիրտը տեղը չէ. ինչի՞ ի՞նչ է պատճառն՝ չկամութիւնը, սիրտը վեր չառնեն, որ ուրիշը լաւ գրութեան մէջ է. Ամեն օր աչքով չե՞նք տեսնում, տկանթով չե՞նք լսում առըստառի համար նախանձելու խօսքեր, որ մինը ուրիշ մի մարդի ատումէ, ինչ է որ նրա բանը լաւ է գնում, յաջողակ է, արհեստը, կամ բռնած գործը յառաջ է գնում, լաւ աշխատանք է անում, փողի տէր դառնում ու պատուաւոր մարդոց կարգն է անց կենում. ի՞նչ է պատճառն. չկամութիւնը. կարծես թէ նորա բաղդաւոր, յաջողակ ու պատուաւոր մարդ գառնալուն է, որ ինքն քաղցած՝ անապրուստ է մնում, իր թէ իւր հայն է ձեռքիցը խլում ու իրան զրկում. կամ թէ չե՞նք լսում, չե՞նք տեսնում կառամուլ մարդի նախանձն, որի համար անտանելի բան է ուրիշի վրայ գովասանք լսելը, ուր մնաց թէ իւր կողմից, իւր բերանից եւս այնպիսի խօսք հանել. իսկ երբ որ՝ ուզի՛ չուզի՛ ճարը չկայ պէտք է ինքն եւս ասի միեւնոյնը, այդպիսի միջոցին՝ որ նեղ տեղն է ընկած, թէպէտ ինքն եւս գովումէ, բայց իւր մըիսիթարութիւնն այդտեղ միայն այն է, որ վարպետութիւնով մի թունաւոր բայց կարող է բաց թողնել բերանիցն իւր տուած գովասանքների ետեւից։ Շատ անգամ չե՞նք տեսնում, չե՞նք հասկանում մեր կեանքի մէջը նախանձոտ մարդի այն ցած ու անպիտան բնութիւնն, որ սիրտը տեղն է ընկնում, երբ որ մի արժանաւոր մարդի առաքինութիւնը կասկածելի է անում, եւսեւից վատն ու հակառակը խօսելով, վատ մեկնութիւն տալով,

ոււացնելով. ուրիշ մարդոց ունեցած մեծ ձիբերն ու շնորհը-ները սատանայական հնարագիտութիւնով ասած խօսքերովն ու բռնած ճանապարհովը՝ պատիկացնում է, ինչ է որ ինքն յունի նորա ունեցած շնորհըներն եւ ունենալ չէ կարող. խոկ ամենից հեշտ բանն այդպիսի անպիտան հոգւոյ տէր մարդի համար այն է, որ ուրիշի պահապատօր կողմերը, նորա արած փոքրիկ սիսայ, ների մէջը պտուի, գտնի, մի բան, մեծացնի ու մեծ յանցանք, մեծ պակասութիւնի տեղ ցոյց տայ ու անց կացնի, լուն՝ ուզա շինելով ինչ է որ շատ մարդիկ սիրումեն ու պատվում՝ արժանաւութիւնները, կամ լաւ կողմերն այն մարդի, որին ինքն նախանձումէ: Քեզ եմ հարցնում ընթերցող. ո՞ր տեղիցն են անուն կոտրող, թունաւոր ու ծաղր անող, մարդի ետեւից պոչ կպցնող խօսքերն, եթէ որ նախանձիցը չեն:

Չկամն ինքն եւս գիտէ, որ իւր քնութիւնը վատ է, անպիտան սրտի տէր է եւ զորա համար աշխատումէ ծածկել, որ չճանացն թէ ինչ մարդ է, Այս պատճառովնա ձեւանաւմէ աւելի բան հասկացող, ուրիշին խրատ տուող, ճանապարհ ցոյց տուող որ եւ իցէ գործի ու հանգամանքի մէջ, շատ անգամ եւս ցոյց է տալիս իրան մարդի բարին կամեցող ու չարից զգուշացնող: Կամ թէ տեսնումես, որ արհամարհումէ հպարտութեամբ այն բարիքն, որ ուրիշ ճանապարհով ձեռք բերելն իւր համար գըտուար է, կամ թէ ծածկումէ իւր սրտի չարութիւնը, ձեւանալով երեսանց բարեպաշտ ու աստուածավախ. մինչեւ այսօր եւս միամիտ, տգէտ ժողովրդի այս՝ այն գասակարգումն կտեսնես այդ, որ այդպիսի սուտ աստուածապաշտ մարդիկն իրանց խարդախ ու կեղծ վարմունքովն մեծ պատիւ ունին: Այդ անպիտան մարդոց բանեցրած ամեն զղուելի հնարներն ու ատելի վարմունքը մի՛ թէ կարելի է լոյս աշխարհը հանել. խայտառակել, որ ամեն մարդ հասկանայ գորանց ինչ հրէշ լինելը:

Ամենայն նախանձ մի պակասութիւն, մի ախտ է, որ ցոյց է տալի թէ այդ պակասութիւն ունեցողը մեծ ու աղնիւ հոգւոյ տէր լինելուց բռլորովին հեռու է. այդ ախտը միանգամայն մի պերախտութիւն է Աստուծոյ նախախնամութեանը գէմ:

«Զեր մէջ խմաստունն ու խելք ունեցողն ովէ է,» ասումէ սուրբ գիրքը. «իւր բարի վարքովը ցոյց տաց իւր գործքն հեղութեան եւ իմաստութեան մէջ:» Խայց եթէ ձեր սրտի մէջն գառն հակա-

ուակութիւն ու նախանձ ունիք, մի պարծենաք ու ճշմարտութեան դէմ սուտ մի խօսէք. պատճառ որ այս՝ այն խմաստութիւնը չէ, որ երկնքիցն է իջնում, այլ երկրաւոր, մարդկային ու միանգամայն սատանայական է:

Ով որ այս ախտովն արատաւորուել կարող է, հաւատոց այս խօսքին թէ՛ նոր և համար նախանցուո՞վ չէ, ով անբաղդ ճարդ է, այլ անբաղդ ճարդ է նոր և համար, որովհետք յայտնի պէտական-մարդկան ու այնպէս նոյն բնու-նեան տէր է, ով նույնուո՞վ է-ը սէրու նախանչ ճանի ու նախանչով ճարդ ւ էնէ՛: Եթէ որ գումի բովէ եւս քո անձիդ վրայ այնչափ ոյժ ունիս, որ քո վրա գարձնես աչքդ քո եղբօրիցդ, որի կամ ունեւոր լինելը, կամ լաւ զինակի մէջ լինելը, կամ պատիւ ունենալը, կամ արտաքին արժանաւորութիւնները, ուսումն ու գիտութիւնը, կամ սիրելի լինելը աչքդ ծակումէ ու սիրոդ վեր չէ առնում, տան, ինքնոդ քեզ կհաւանիս, սրաիդ մէջն անց կացածը քեզ զիւր կուգայ ու քեզ կարգարացնենս, որ օրինաւոր մարդ ես, աղնիւ մարի ու սրտի տէր ես: Ամեն մի մարդ ունի յատկութիւններ, որով պատուական մարդ կարող է լինել, եթէ միայն իւր ունեցած յատկութիւնները զարգացնել, կատարելագործելը գիտէ. ամեն մի մարդ Աստուածանից ստացել է իւր ունեցած հանգամանքների մէջն այս՝ այն լաւ կողմերն, եթէ միայն գիտէ նորանցից օգուտ քաղելն: Ամենեւին չէ կարելի տսել, որ մեք իւելք ու շնորհք յունինք բազգաւոր կեանք ունենար. բայց այս՝ ունինք այն պակասութիւնն, որ մեք հանգամանքները լաւ չենք կշռում, կամ չափաւորութիւն առած բանդ չունինք, առանց որոյ թշուառ պիտի մնանք, եթէ որ բոլոր աշխարհներն եւս ձեռք բերէինք:

Ունեցածուի ըստականացողն համար ամենեն դժուար բան չէ բաղ-  
դաս-ու լինելը. Բայց լբաս-ու անացողն համար դժուար է ու-ընկների պէս  
հաս-ու լինելը: Նատ ու շատ մարդոց համար վատն այն է որ,  
իրանց բազգաւորութեան չափը հասկանալու համար միշտ ու-  
րեւէ հալուն են չափում իրանց ու իրանց ունեցած զինակն: Նո-  
րանց համար հերիք չէ, որ գոհ լինին միայն իրանց համար այն-  
քանով, որքան որ իրանց հասկացողութիւնուն աշխարհին մէջ ան-  
կարօտ կեանք կարող էին ունենալ. չէ, նորանց համար այդ քանն  
ի՞նչ է որ. նորանց ցանկութիւնն այն է, որ բազգաւոր լինելու  
կողմանէ ուրիշներից աւելի լինին, իրանց չետ ուոք ձգող պինի:

Յուց մի խելքի տակ քցենք թէ՛ ինչ առել է ուրիշներից աւելի բաղդաւոր լինելը, ու կարելի՞ բան է արգեօք։ Աստուած ամեն մի մարդի իւր բաժին ոյժը պարզեւել է, որչափ որ իրան բաւական է համարել. եւ միայն այդ ուժովն ու միայն այդ ուժի մէջն կարող է, ամենայն աշխատութիւն ու ջանք գնելով, իւր կեանքի նպատակին հասնել. ուրիշ կերպով, ուրիշ ճանապարհով ու միջոցներով ոչինչ չէ կարող անել։ Գու այս մարդին աւելի ձիրքերի տէր ես կարծում ու մտքումդ ասումես թէ՛ եթէ ես նորա շնորհներն որ ունենայի, ինձանից բաղդաւոր ովկ կարող էր լինել։ Հաւատա ինձ որ, եթէ նորա բոլոր ունեցած ձիրքներն եւս որ ունենայիր, գորանով ոչ մի բաղդաւորութեան մէջ եղած չէիր լինիլ, քանի որ քեզ հանգստութիւն չառւող դժգոհ ու ջրաւականացող քո սիրտգ կունենայիր այդ բարեմասնութիւնների հետ միասին։ Տեսնենք թէ՛, բանեցրել ես արգեօք այդ ամենայն միջոցներն, որ Աստուծոյ տեսչութիւնը քեզ պարզեւել է, եւ օգուտ քաղել ես արգեօք այդ միջոցներիցն։ Գիտես դու, որ եթէ ուրիշ հանգամանքներ ունենայիր, ուրիշ զգացմունք եւս կունենայիր, այնպէս կփոխուեիր, որ ամեն բանի վրայ ուրիշ աչքով մտիկ կտայիր, մի խօսքով, ուրիշ մարդ կդառնայիր, այդ մարդը չէիր լինիլ։ Մի մաիկ տուր երեխայի վրայ, ինչպէս սրտով ուզութիւններն վայելէր, նորանց հետ շատ բաների մէջ հաւասարուեր, նորանց պէս իրաւունքներ, արտօնութիւններ, ազատութիւններ ունենար, որ փոքրները չունին։ Վերջապէս՝ երկինքը կատարումէ նորա ցանկութիւնները, ել ինչի՞ համար է ուրեմն կատարեալ հասակի մարդն բոլոր սրտով ցանկանում, որ էլի երեխայութեան անվրդով, անպղտոր, անմեղ ու անհոգո ուրախութիւնները տեսնէր։

Բառապահ լինելը այն ժամանակ միայն հեշտ բան է, երբ որ մարդս իւր ուրախութեան ու հանգստութեան ամենայն խանգարիչներին՝ ուզումեմ ասել, իւր անմիտք կիրքերն իւր սրտիցը կհանի, դուրս կձգի. երբ որ մարդ Աստուծոյ պարզեւածովը կբաւականանայ, իւր ունեղածն՝ ջանք կանի կատարելագործելու, եւ ամենայն բարի մարդոց սիրան գէպ ի իրան կըաշի ու սիրելի, պատուելի կլինի. որ նորանց հետ ամէն բանի մէջ սիրով ու քաղցրութեամբ կվարուի, ջթողուլ որ՝ նորանց սիրտը մի կեր-

պով իրանից պակսի, կամ սառչի: Ուշեւեւց առելք բարդաց Անելը, կամ թէ ուրիշների չափ բաղդաւոր լինելը՝ որ ասլումէ, մի անխելք խօսը է, որովհետեւ ոչ մէ մաշկանացու մարդ չէ կարող իմանալ թէ՛ շատ թէ քիչ գոհ է արդեօք ուրիշն իւր սրտի մէջ: Նատ կարելի է, — բայց չեն իմանում, — որ այն մարդն, ում որ գու նախանձումես այս՝ կամ այն բանի տէրը լինելուն համար, շատ կարելի է, ասումեմ, որ այն մարդի քաշած ամեն նեղութիւնների, վիշտերի գլխաւոր պատճառն՝ այն բաներն են, որոց համար գու նորան նախանձումես: Կու նրա գեղեցկութեանն ես նախանձում. շատ կարելի է որ՝ հենց այդ գեղեցկութիւնն է պատճառն, որ նորան այնքան հայածումեն, ատում ու հետը վատ վարվում: Խնչ որ պսպղումէ, ոսկի չէ միշտ. մի այն ազնիւ հոգոյ աննկուն զօրութիւնն է, որ մարդիս ճշմարիտ ու իսկական արժէք ունենալն է հաստատում: Ու գու հաստատում ես որ, այն բանը, որ ուրիշներն ունին ու գու, գովելով, երկինքն ես հանում, քեզ եւս՝ քո ունեցած հանգամանքներիդ մէջ՝ քո ունեցած խելքիդ ու ընդունակութիւններիդ մտիկ տալով, քեզ համար եւս օգտական կինին: — Երբ որ լաւ ծանրութեթեւ անելուց յետոյ, տեսնումես որ՝ ուրիշի արած բանն՝ գու քո ձեռքիցդ չգալ, ել ինչու ես հոգիդ արատաւորում քո ամօթալի նախանձիդ ցանկութիւններովն: Խոկ եթէ կասկած չունիս ամենեւին, որ գու եւս ուրիշի յաջողակութիւնն ու շնորհըն. ունիս, կարող ես նորա նման լաւ լինել քեզ համար՝ այն բանն անելով, ինչ որ նա անումէ ու իւր գրութիւնը լաւացնում, ուրեմն ինչու համար քո ունեցած բոլոր ոյժեցն չես բանեցնում ու ամեն կերպով ջանք չես անում՝ բարի նախանձդ գործովդ ցոյց տալ, որ գու եւս նորան հասնես, նորա լաւ վիճակն ունենաս: — Մի մեռած ու թոյլ սիրտ, որ ուրիշին նախանձելը միայն գիտէ, քեզ ոչ մի քայլ եւս յառաջ չտանիլ, այլ միայն այն կանի, որ քեզ վրայ եւս ամենն կծիծագեն, տնազ կանեն քեզ ու մարդատեղ չեն զնիլ՝ իբրեւ ձեռքիցն ոչ մի բան չեկող մարդի, որ միայն ուրիշին նախանձելը գիտէ, անպէտք, անգործ մարդ է. մինչեւ անգամ այնքան սիրտգ կկոտրուի, որ գու քո այժմեան գրութեանդ մէջ ինչ որ ունիս, այն եւս աչքիդ չգալ ու սիրտ չմնալ վրադ, որ ունեցածդ գոնէ վայելես:

Ամեն մի մարդի ունեցած շնորհըն, որ Աստուած տուել է իրան, մի ուրանար այլ նորա ունեցած արժանաւորութիւնը ճանաչիր ու ընդունիր քո սրառմդ, նոյնպէս եւ այն մարդոց գին դիր ու պատուիր, որոնք որ իրանց աշխատութիւնովն իրանց վիճակը կարօղացել են շատ լաւացնել: Զլինի թէ հոգիդ արատաւորես սրտիդ նախանձիցը ու ոչ շնորհը ունեցողին եւ ոչ աշխատասէր մարդին աչքդ զվեր առնի, որ քեզ պէս չեն, իրանց համար շատ լաւ են: Այս եւս իմացիր, որ ոչ մի երկրաւոր բարիք, պարզեւ չպիտի կարծես, որ ինքն իրան լաւ է, կամ վատ այլ մարդս է լաւ՝ կամ վատ անողը. մինի համար Աստուծոյ բարիք, պարզեւ է դառնում; իսկ միւսի՝ կորչելուն, փշանալուն պատճառ:

Եթէ քո ցանկացած բանիդ կարող ես հասնել, ել ինչի՞ ևս միշտ ձեռքեցդ ծալում, նստում: Նախանձն՝ ամէն մի բարի բան յառաջ բերելու համար՝ տնպառուզ մի կիրք է. քեզ փուշ է տալիս, մինչդեռ դու վարդեր ես ցանկանում ձեռքումդ. ունենալ: Եթէ դու քո մոքումդ ասումես թէ՛ ես ուրիշի ունեցած շնորհըը չունիմ՝ ու ցանկանումես, որ Աստուած քեզ տւելի խելք, միտք, շնորհը տայ, ես քեզ կպատասխանեմ թէ՛ դէ՛չ՝ ինչքան շնորհք, խելք եւ միտք, որ Առեղծոզդ քեզ տուել է, առաջ գեռ ունեցածդ բանեցուր քո եւ ուրիշների բազդաւորութեանը համար: Առաջ սորմիր Աստուծոյ քեզ պարզեւած քանչքարը շահեցնել, այն ժամանակ կարելի է քեզ արժանաւոր կհամարի՝ բարի ու աղնիւ ծառայիդ հաւատարմութիւնը վարձատրելով, շատ բանի վրայ դնելու:

Ա՛յ Քրիստոսի աշակերտ, դու՛ որ նախանձոտ մարդոց ձախ խոսքերիցը բոլորուին ազատ չես, լսիր ու ականջիդ օղ արածակորոս Առաքեալի գեղեցիկ խօսքը, որ ասումէ. «ո՞վ է ձեզանում իմաստուն ու խելօք, թող իւր բարի վարքովը ցոյց տայ իւր գործերն հեղութիւնով ու իմաստութիւնով: Բայց եթէ դառը նախանձ ու հակառակութիւն ունիք ձեր սրտերումը, մի պարձենաք ու սուտ մի ասէք ճշմարտութեանը գէմ: Այս իմաստութիւնն երկնքից իջած չէ, այլ երկրաւոր շնչաւոր ու գիւտական: Պատճառ որ՝ ուր որ նախանձ ու կոխւ կայ, այնտեղ անկարգութիւն ու չար բաներ կա՞ն:

Բայց վերին խմաստութիւնը նախ եւ առաջ սուրբ է, եւ յետոյ խաղաղաբար, չեզ, չլու, ոգորմութիւնով ու բարի պարզեւներով լիքն, անկողմնասէր, անկեղծ:

( 10. 10. 10. 10. )

P. B. U.

ԵՄ ՆԿԱՑՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Ա Լ Ե Վ Ա Ն Դ Ր Ա Պ Ո Ւ Թ Յ Ա Վ Ը

$$(G - P_{\alpha} \cup Q_{\beta}) = (G - P_{\alpha} \cup P_{\beta}) \cup (P_{\beta} \cap Q_{\beta}).$$

2

የተመለከተው እኩል በተጠቀሱ — በታች — የመሳሪያ — በታች ተተክክለኛ ይመለከትናል,

Դարսի պարիսպները կը կին են եղել և բացի արևելեան կողմից, որ խրամատ է ունեցել, միւս կողմերից շրջապատած լինելով, հարաւային և արևմտեան կողմից՝ գետի պայմառ՝ և հիւսիսային կողմից՝ այժմեան միջնարերդի անմատչելի քարաժայուղ, անառիկ է եղել:

Այս պարսպապատի մէջ գտնուումեն Տաճկաց Ռւլու—ջամի կոչուած մեծ մղկիթը, որ այժմ այլ ևս դադարել է իւր պաշտօնը կատարելուց, և աբբունի զանազան շենքեր, գիւանատներ, կառավարիչ փաշարի ապարանքը ելն, Որովհիտե հայկական բուն Կարսը հենց պարսպապատի մէջն է եղել, հետեւաբար հայկական հին բոլոր շենքերը այն տեղ են: Արաս թագաւորի շինած կաթուղիկէն, յանուն տասն և երկու առաքելոց, որ այսօր էլ կանգուն կայ իւր սրածայր հայկական գմբեթով, գրեթէ նոր է բոլորովին: Չնայելով որ 100 տարի՝ է անցել եկեղեցու շինութիւնից յետոյ, բայց շենքը մաքառելով բնութեան և մարգու հարուածների գէմ՝ մինչև այսօր շեն է և երկար շեն կ'մնայ, վասն զի կապոյտ որձաքարերը հայկական հանձարի շնորհիւ այնպիսի ամրութիւն են կազմում, որ մշտնջենաւոր կարելի է անուանել. և մարդկային բոլոր հնարագործութիւնը հայկական պյտ Միշատակարանը անհետացնելու համար եղաւ, միայն անուանափոխութեան և կրօնախութեան մէջ . . . . Այդ եկեղեցին նայելով Բագրատունեաց ժամանակի ճարտարապետութեան նմուշների հետ, որպիսի են կաթուղիկէն և Ս. Փըրկիչ Եկեղեցին Անոյ, Մարմաշէնի եկեղեցին ելն, ոչինչ վսեմութիւն չունի, չունի և պյտ ժամանակին յատկացեալ քանդակների նրբութիւնը. բայց մինչև ցայսօր միշտ օտարների նախանձը շարժել է իւրացնելու: Շինութիւնից յետոյ զեռ օճման նաւակատիքը չկատարած՝ Ափ-